



ԶՈՒՄՐԱ ԵՐԿԱՆԴՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

«ՄԱՐԴ-ԻՐԱԴԱՐԾՈՒԹՅԱՆ» ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆԻ ԽՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրիգոր Գուրգադյանի կերպավորած «մարդ-իրադարձությունները» ինքնատիպ ընդհանրացումներով առանձնացող անհատականություններ են, աշխարհի պատկերացումները փոխող, աշխարհը նորովի կերտող մտքի հսկաներ:

Մարդու մեջ մարդկայինի պանծացմամբ, օրվա մարդուն ու եկող սերնդին ուղղված կենսածն թելադրող հղագրումներով, իր քաղաքացիական ազնվագույն դիրքորոշումների շեշտումներով Գրիգոր Գուրգադյան խոհագրողը անվերապահորեն նվաճում է ժամանակի և ընթերցողի հոգեբանական վստահությունը, օգնում ճշտորոշելու վարքաբանական տարազան դրսևորումները ինչպես անձնային, այնպես էլ ազգային կյանքում:

Հիմնաբառեր. աստղագետ-ֆիզիկոս, մարդ-իրադարձություն, կողմնորոշիչներ, նրբագիտակ, մտքի հսկաներ

JEL: Y8, Y9, Z00

«Որքան, որքան մարդիկ կան մեր շուրջը, որոնք իրենց կյանքին ընթացքին գործած կըլլան սխրանքներ, որոնց կյանքը եղած կըլլա ամբողջական նվիրում, բայց որոնց մասին մենք կմնանք անգիտակ:

Մարդիկ կան, որոնց չնչին գործերուն մասին կպոռան տանիքներեն, մանավանդ երբ այդ կպատկանի անցյալին և կօգտվին իրենց անգո հերոսություններեն»¹:

¹ Թ. Թորանյան, Ուր կտանին ճամփաները, Եր., «Սովետական գրող», 1978, էջ 165:

Բոլորս էլ առիթներ ունեցել ենք այսպես մտածելու և բարձրաձայնելու, այնուամենայնիվ, ցանկանում ենք Թորոս Թորանյանի ձևակերպումով սկսել մեր ժամանակների անվերապահ մեծության՝ Գրիգոր Գուրզադյանի խոհագրության մասին մեր համեստ դիտարկումները, քանի որ իր տեսակի մեջ եզակի, տիեզերական մտածողությամբ այս հզոր անհատականության *գործերուն մասին*, իրոք, *պիտի պոռանք տանիքներեն, մանավանդ որ կպատկանին շատ մոտիկ անցյալին*, և իրական են, խիզախական՝ իրենց զորությամբ, աննախադեպ՝ իրենց նշանակությամբ: Աննախադեպ, քանի որ աշխարհահռչակ աստղագետ-ֆիզիկոսը, լինելով նախնյաց ինքնօրինակ մշակույթն ամենայն խորությամբ կրող ընտրյալներից մեկը, իր ստեղծած գեղագիտական միջավայրում կուռ համադրության մեջ է դրել ինչպես համամարդկային, այնպես էլ ազգային բարձր ու վավերական արժեքները ներառնող թե՛ մշակութային, թե՛ բարոյահոգեբանական կենտրոնիչներ:

Հզոր ինքնահայեցողությամբ գեղագետի աշխարհայացքային կանխադրույթը ձևավորող այդ կենսական կողմնորոշիչներն ու նրա ներաշխարհի նրբերանգների ամբողջությունն իրենց տարախոսք արտահայտումներով հատկապես ընդգծվում են իմաստասիրական խոհագրության սովորաբար պատումներում՝ նվիրված գիտությանը, արվեստին ու ճարտարապետությանը: Բազմաբովանդակ այդ խոհագրության էջերում արտահայտվել են ոչ միայն Գուրզադյանի՝ որպես գրողի տաղանդի ինքնահատուկ գծերը, այլև թե՛ պատմական տարբեր ժամանակաշրջանների, թե՛ իր ապրած ժամանակաշրջանի հասարակական ձգտումներն ու գեղագիտական պատկերացումները:

Գուրզադյանի գեղագիտական բարձրագույն նպատակն ու նախընտրած տիպարը անսահմանի՝ մեծ տիեզերքի, տիեզերական մտածողությամբ հսկաների, նրանց հզոր արարումների գաղափարների շուրջ մտորումներում են գոյավորվում: Գրողի հիացք-գարմանքի առարկան, կերպավորած մեծ առեղծվածը, նախ և ամենից առաջ, Մեծ Տիեզերքն է, և նրան ներծույլ՝ նրանում իր բաժին դերակատարումն ունեցող բանական կերտվածքը՝ մարդը՝ իր մեծ ու փոքր ներաշխարհներով, մարդը, որ «նույնպես տիեզերական մարմին է», որի «...վերանալով կամ չլինելով՝ ինչ-որ բան տիեզերքից կպակասի: Գոնե սկզբունքորեն»²: Սա գեղագիտական հավատամքի վերածված հայեցում է. այդ հավատամքի հաստատումը «Տիեզերքը ավի մեջ», «Կոսմիկական կատաստրոֆա», «Գալակտիկաների աշխարհը», «Տիեզերքը և մարդը» ժողովածուներն են:

Խոհագրողի կերպավորած «մարդ-իրադարձությունները» ինքնատիպ ընդհանրացումներով առանձնացող անհատականություններ են, աշխարհի պատկերացումները փոխող, աշխարհը նորովի կերտող մտքի հսկաներ, իրական, իր օրերում գործող մարդիկ և պատմական, աշխարհի նյութական ու հոգևոր մեծագույն բացահայտումների հեղինակ գիտնականներ, նկարիչներ, ճարտարապետներ, պոետներ, երկրների համար ճակատագրական դերեր ունեցած զորավարներ, որոնց կերպարների ներքին էության, հոգևոր դաշտի նրբագծերի բացահայտումները հեղինակը կատարում է խորամտորեն, խոսքի ընտրության մեծ վարպետությամբ, պատկերավորության ինքնօրինակ շեշտադրումներով:

² Գր. Գուրզադյան, Տիեզերքը ավի մեջ, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 7:

Ահավասիկ՝ *Լեոնարդո դա Վինչին*. «Շքեղություն էր իր ողջ էությանը: Չափազանց էր հաճելի ու մարդամոտ. նրան սիրում էին»³, «Լեոնարդո դա Վինչիի ինքնանկար-գրչանկարը տիեզերական գանձարանում դրվելիք արժեք է, մի հարստություն, որի տերը ինքը՝ տիեզերքն է»⁴, ինքնատիպ է Լոնդոնի Ազգային թանգարանում գտնվող կտավում* Տիրամորը պատկերող կնոջ կերպարի՝ զարմանալի պարզության մեջ խորաշերտեր պահած մեկնաբանությունը՝ «Լեոնարդոն ուզում է համոզել մեզ, որ այս անհուն տիեզերքում կա, պետք է լինի մոլորակ, որտեղ ահա այսպիսի կին-արարածն է որոշում, թե ինչ է կյանքը...»⁵, նույն տեղում կարդում ենք Ջոկոնդայի մասին՝ «Այդ կին-արարածը դարձավ ճիշդ իր հոգու ու ճախրանքը վրձնի»: *Հաննիբալ Բարկան*. «Նա եկավ հավերժությունից ու գնաց հավերժություն... Նա եկավ հանձարի աստղը ձակասին, բայց գնաց աստվածներից մերժված...»⁶: *Պիկասոն*. «Մարդկային երևակայության թռիչքի, նրա ծայրահեղ դրսևորումների ապշեցուցիչ մի երևույթ է»⁷: **Բրունելլեսկի, Սոցարտ, Վան Գոգ**. անսահման մեծեր, որոնց «տեսիլքով այս մոլորակը հասու եղավ այն բանին, ինչը կոչվում է տիեզերական ներդաշնություն»⁸: «Ճարտարապետության Սոցարտը»՝ *Բրունելլեսկին*. «անհրապույր արտաքինով մի ֆլորենտացի, որին «երկինքն էր ուղարկել»՝ հանձարեղության կնիքով ձակասող դրոշմելուց հետո, ու այն էլ այնպիսի ուժգին հարվածով, որ առաջացած սպին այդպես էլ չանհետացավ մինչև կյանքի վերջը»⁹, «Այստեղ, Հռոմի Պանթեոնում է թաղված *Ռաֆայելը*... Աստվածային Ռաֆայելի թաղվելու տեղը դա՛ կարող էր լինել միայն... տիեզերքը»¹⁰: Ահա և *Վան Գոգի* արևապաշտության ավարտուն բնորոշումը՝ «Նա նկարում էր Արեգակի... դիմանկարը»¹¹: *Բլեզ Պասկալը*. «...հանձարի կայծեր էին ցայտում այն ամենից, ինչին դիպչում էր նրա ձեռքը, ինչի վրա կանգ էր առնում նրա միտքը»¹²: (Ի դեպ, միջանկյալ նշենք, որ Գուրգադյանը, ինքնահատուկ հիացմունքով ու ակնածանքով ներկայացնելով Բլեզ Պասկալի հայտնագործությունների համամարդկային նշանակությունը, փայլուն մեկնաբանություններով է մատուցում նաև հանձարեղ գիտնականի իմաստասիրական հայեցումներն ու դատում-բանաձևումները մարդու մասին. «Ո՞վ է և ի՞նչ է մարդը...» ենթավերնագրված երեքէջանոց պատումը վերածվում է պասկալյան ու գուրգադյանական մտորումների ներթափանց համաձուլվի՝ խորհել տվող, ներհայեցումների նոր ծիրեր բացող. այն մղում է մարդուն՝ «ինքն իր հետ ներքին զրույց վարելու» և փորձելու հասկանալ մարդ արարածի գոյության խորհուրդն անսահմանության մեջ, մարդու, որ է «ոչինչ՝ անսահմանի համեմատությամբ, և ամեն ինչ՝ ոչնչի համեմատությամբ»)»¹³:

³ **Գր. Գուրգադյան**, Կաթավաբերդի առեղծվածը, Եր., «Զանգակ-97», 1998, էջ 10:

⁴ Նույն տեղում, էջ 16:

* Խոսքը Տիրամորը երկու փոքրիկների ու մի կնոջ հետ պատկերող կտավի մասին է:

⁵ Նույն տեղում, էջ 17:

⁶ **Գր. Գուրգադյան**, Մի սիրո պատմություն, Եր., «Զանգակ-97», 2004, էջ 37:

⁷ **Գր. Գուրգադյան**, Տիեզերքը ավի մեջ, էջ 16:

⁸ **Գր. Գուրգադյան**, Կաթավաբերդի առեղծվածը, էջ 43:

⁹ Նույն տեղում, էջ 31:

¹⁰ Նույն տեղում, էջ 87:

¹¹ **Գր. Գուրգադյան**, Տիեզերքը ավի մեջ, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 202:

¹³ Նույն տեղում, էջ 210:

Հակիրճ, սեղմախոսությամբ արված հիանալի (իր սիրած խոսքով՝ ֆանտաստիկ) մեկնաբանություն-գնահատումների ենք հանդիպում նաև մեր մեծերին վերաբերող պատումներում: Հայերենի հարստության նրբագիտակ գրողը ճարտարավոր խոսքով է ապահովում կերտած դիմանկարների ստվար ուրվագծերով հագեցվածությունը:

Ահավասիկ. «*Նարեկացու* մտածելու կարողությունը և տրամաբանության ուժը տիեզերական ընդգրկումներ ունի, այլ հանգամանքներում նա կարող էր լինել և ստեղծողը հարաբերականության տեսության»¹⁴, «Ի՞նչ է իրենից ներկայացնում նրա «Մատյան ողբերգությունը», եթե ոչ մի վիթխարի հիմն՝ նվիրված մարդու և տիեզերքի միասնությանը: Հիմն նույնիսկ իր կառուցվածքով. այն կարծես չունի սկիզբ, չունի վերջ: Ինչպես ինքը՝ տիեզերքը»¹⁵: «Տխրության փիլիսոփայությանը ծանոթ» *Վիլյամ Սարոյանը* «լավ գիտի մարդուն, նա մարդու գիտակն է, մասնագետը, նա գիտի, թե ինչ վիթխարի բան է այդ մարդ ասածը՝ մի ամբողջ աշխարհ, մի տիեզերք՝ տիեզերքի մեջ»¹⁶: *Սարտիրոս Սարյան, Հարություն Կալենց, Մինաս...* Մեկը մեր ժողովրդի վիպերգական շունչն է, մյուսը՝ երազուն, ժոմանտիկ ներաշխարհը, երրորդը՝ ողբերգական եղելությունը: «Երեքն էլ աստվածներ գույների... Եվ եթե նրանցից մեկական նկար ուղարկվեր հեռու մի մոլորակ, ապա այնտեղ, այդ անհայտ մոլորակում կմտածեին անշուշտ, որ այս ժողովուրդը պիտի որ լինի անչափ արևապաշտ, անչափ երազուն, բայց և անչափ տառապած...»¹⁷:

Կատարված սակավօրինակ մեջբերումներն անգամ Գուրգադյանի՝ խոհուն դիտարկումներով հիմնավորվող գեղագիտական ընդհանրացումներ կատարելու հմտության վկայությունն են. հատկանիշ, որ կարելի է ներառել խոհագրությունների բովանդակությունը մեծապես հարստացնող առանձնագծերից առավել շեշտադրելիների շարքում:

Հերոսների մասին հյուսվող պատումների վերնագրերն անգամ զարմանալի պատկերավոր են, խորապես հատկանշող: Հապա. աննախադեպ թվով՝ վեց անգամ տիեզերքում եղած, «քուն թե արթննի՝ միայն տիեզերք» երազող Քեն Մաթինգլիի մասին պատումը՝ «*Հոգին տիեզերքում սավառնող*», «փայլատակումներով գործող միտք, սուր արտահայտված զգացողություն» ունեցող Բլեզ Պասկալի մասին՝ «*Խելագար հանձար՝ անժամանակ ծնված*», «ոչ միայն լույսը, այլև ստվերը գործող գույն դարձնող Կալենցի մասին՝ «*Խրախճանք գույների*», այդպես և՛ կերպավորված նշանավոր ճարտարապետական կոթողների մասին պատումների վերնագրերը՝ «*Հանձարեղ անհեթեթություն*» (Դոժերի պալատը), «*Կամարների սիմֆոնիա*» (Դաստիարակչական տան կամարաշարը)*, «*Ակնթարթը գեղեցկության*» (Սուրբ Պետրոսը), ինչպես նաև պատմական իրադարձությունների, երևույթների մասին պա-

¹⁴ Նույն տեղում, էջ 20:

¹⁵ Նույն տեղում, էջ 19:

¹⁶ Նույն տեղում, էջ 188:

¹⁷ **Գր. Գուրգադյան**, Կաքավաբերդի առեղծվածը, էջ 331:

* Հեղինակի վկայությամբ՝ «Առաջիններից մեկը, որը հասկացավ ու տրվեց Բրունելլեսկու հանձարի հմայքին, արժանահիշատակ Մխիթար Սեբաստացին էր, որը երեք հարյուր տարի առաջ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում իր հիմնադրած միաբանության ընդարձակ կառույցը նախագծեց իր իսկ ձեռքով ու կառուցեց՝ ելակետ դարձնելով Դաստիարակչական տան կամարաշարը. այդ ժամանակ նա 25 տարեկան էր»:

տումների վերնագրեր՝ «Հնայքը հանձարեղ սխալների»*, «Օդային դրակներից փլատակներ չեն մնում», «Մի կարոտի պատմություն» և այլն:

Տարբեր թեմաներ ընդհանուր ձևի մեջ միավորելու կառուցվածքային հատկանիշներով ինքնատիպ մի հնարանքից՝ նամակի ձևով շարադրելու կերպից** հմտորեն օգտվելով՝ Գրիգոր Գուրզադյանը «Նամակներ որդուս Կաքավաբերդից» ենթախորագիրն ունեցող «Կաքավաբերդի առեղծվածը» ժողովածուում մի կյանքով ևս ապրելու հնարավորություն է ընծեռել այս հին ու նոր աշխարհի հանրահռչակ շնչավոր և անշունչ կերպարներին: Հիշատակենք առավել տպավորվածներից գոնե մի քանիսին. «գիտության ընթացքի խոշորագույն շրջադարձները ստեղծող-իրականացնող» մարդկային մտածողության հզոր փոխարկողները՝ Արքիմեդ, Գալիլեյ, Ղեկարտ, Նյուտոն, Լայբնից, Էյնշտեյն, դե Բրոյլ, Հայզենբերգ, Շրեդինգեր, Ղիրակ, Հաբլ, Լեոնարդ Էյլեր... արվեստի բնագավառի տիեզերական հսկաները՝ Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո, Վան Գոգ, Պիկասո, Ֆլիպո Բրունելլեսկի, Դոնաթելո, Սանսովինո, Լորենցո և էլի ուրիշ մեծեր, նրանց թվում՝ հայ «երեք հանձարեղ անուն»՝ Մարտիրոս Սարյան, Հարություն Կալենց, Մինաս», որոնք «այսօր աշխարհի դատին կարող ենք դնել անվարան», նաև՝ երաժշտության, գրականության, իմաստասիրության աշխարհից տասնյակ «մարդ-իրադարձություններ»:

Անչափ տպավորիչ են նաև իրենց գեղագիտական քանիեորդ կյանքն ապրող արվեստի, ճարտարապետության հզոր կոթողների արարման, ստեղծման ու նաև որոշների ողբերգական կործանման պատմությունները, նրանց անկրկնելի «կենսագրությունները», պատմական ճակատագրերը՝ Ջոկոնդա, Դոժերի պալատ, Սուրբ Մարկոյի գրադարան, Դաստիարակության տուն, «տիեզերական մտածողությամբ օժտված անհայտ ճարտարապետ-ինժեների խելացնոր մտահղացում» Կոլիզեոն, «տիեզերքի տեսանելի պատկերը» ներկայացնող Պանթեոն, «աշխարհի հարստություն» Ս. Պետրոս տաճար, «երկնքից կախված կանթեղի» նմանվող Կաքավաբերդ, «վաղ միջնադարյան տաճարային ճարտարապետության զմրուխտյա ակ» Կարմրավոր...):

«Մարդկության բարոյական դաստիարակության» համար մտահոգ գիտնականը իր իմացաբանական մտորումները ընթերցողին հասու դարձնելու նպատակով դիմում է գեղարվեստական հետաքրքիր հնարանքների ինչպես խորագրեր, վերնագրեր, պատմելու կերպեր ընտրելիս, այնպես էլ գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցներից օգտվելիս: Նա ինքնահատուկ պարզությամբ է իրերին, երևույթներին տալիս սպառիչ բնութագրումներ, կատարում վերլուծություններ և վարպետորեն, հիմնականում աննկատ՝ ընթերցողին մղում վերանայելու մինչ այդ դավանած արժեքային կենսորոշիչների համակարգը, նախընտրելի կենսակերպ ու մտածելաձև թելադրում:

Գուրզադյանի գեղագիտական հիմնասկզբունքներից մեկը տիեզերքի և մարդու ներթափանց գոյության ներդաշնակությունը ներկայացնելն է: Հե-

* Խոսքը աստղագիտության, լեզվաբանության և կենսաբանության բնագավառներին առնչվող հանրահայտ երեք սխալների՝ Պտղոմեոսի տեսության, եգիպտական հիերոգլիֆների վերծանման պատմության և դարվինիզմի մասին է:

** Ի դեպ, եվրոպական գրականության մեջ տարածում ունեցած՝ նամակներով պատմելու հնարանքը դեռևս Լեոնարդո դա Վինչիից էր գալիս: Խոսքը հանրահայտ «Հայկական նամակներ» խորագրով երեք նամակների մասին է, որոնք, ըստ ենթադրությունների, պատառիկներ են այն գրքի, որ Լեոնարդոն մտադրվել էր գրել Հայաստանի մասին:

տաքրքրականն այն է, որ երբ թվում է՝ կարող ես հաստատապես ասել, թե հանձարել աստղագետն իր գիտական դիտարկումներում, իմաստասիրական հայեցումներում ու դատումներում, այնուամենայնիվ, գերակայության դափնին շնորհում է տիեզերքին, չի ուշանում տատանումը: Կարողում ես «Մարդը տիեզերքում» խոհագրությունը և համակվում տեսակը բովանդակավորող մի վեսն զգացողությամբ. սա սովորական պատումային շարադրանք է, սա մարդուն առաձնաշնորհող փառերգություն է:

Գուրգադյանի գեղագիտական տիպարի նախընտրելի հերոսը իր գործին, իր գաղափարին անմնացորդ նվիրված մարդն է: Անմնացորդ նվիրվածությունը գաղափարին նրա հերոսների համար վարքականոն պայմանավորող հիմնարար սկզբունքներից է:

Տիեզերական գաղափարներով ապրող խոհագրողի կողմնորոշիչ դիտարկումներից մեկը, թե՛ «Գաղափարները տառապանքից են ծնվում: Իսկ առանց գաղափարների կյանքն ուղղակի չկա»¹⁸, ներհայեցումների տեղիք է տալիս: Ինքը՝ գրողը, անվերապահորեն հավատում է, որ ողջ տիեզերքում որոշում, վճիռ կայացնելու հատկանիշը միայն մարդուն է տրված, ուրեմն ասել կարելի է նաև, թե գաղափարներ ծնել-առաջադրելն էլ զուտ մարդկային առանձնագիծ է և բանական էակի կենսականության պայմանավորիչ գործոններից, ըստ էության, գլխավորներից մեկը: Առաջնադրությային այս հայեցումն է ընկած գուրգադյանական գեղագիտական համակարգի հիմքում:

Տիեզերքն ավի մեջ տեսնող Գուրգադյան հայեցողի դատումները «մարդ-տիեզերական մարմնի» մասին ու վերաբերյալ ապշեցուցիչ խորաշերտեր ունեցող բանաձևումներով են: Հավաստենք մեջբերումներով. «Տիեզերքը նույնպես գեղեցիկ է, բայց նա էլ նկարել չի կարող և ոչ էլ ստեղծել երաժշտություն և կամ գրել բանաստեղծություն: Բայց տիեզերքը ստեղծել է ավելի մեծ բան՝ մարդը, և օժտել նրան հատկություններով, որ ինքը չունի. նա նկարում է, երաժշտություն է ստեղծում ու պոեզիա և դրանով էլ հարստացնում տիեզերքը: Այլ կերպ ասած՝ այն, ինչ տիեզերքը ուղղակիորեն չի կարողանում անել ինքը, անում է մարդու միջոցով ու այդ կերպ հարստացնում իրեն»¹⁹, «Թերևս «հոգևոր արժեքի» միակ արժեքը պետք է տեսնել այն բանում, որ մարդուն հատուկ է վերջիվերջո ստեղծել իր տիեզերքը, իր աշխարհը՝ իր մեջ, թեկուզ այն լինի պատրանք, հեռու իրականությունից»²⁰:

Գիտական հենքով դիտարկումների, իմաստասիրական ձևակերպումներով մեկնաբանությունների մի ինքնատիպ հյուսվածք է «Մարդը տիեզերքում» խոհագրությունը. դա մարդու՝ տիեզերական եզակի էատեսակի բովանդակության վերլուծության, նրա ստեղծարար անսպառ կարողության պանծացման մի պատում է՝ փառերգության հնչողությամբ: Խոսքի մտերիմ անմիջականությամբ սկիզբը՝ «Սկսենք դրանից՝ հիշողություն... Սա պիտի համարել մարդու խոշորագույն, ոչ մի բանի հետ չհամեմատվող հատկությունը», արդեն ազդարարում է, որ պիտի վայելենք մեծ հայեցողի իմաստասիրական մտորումները, որոնք իրենց խորաշերտերով մինչև վերջին խոսքը խտամտքեր են՝ իմաստավոր արտահայտություններով, մարդու հատկանշային գծերի բանաձևումներով հագեցած: Դիտարկումը հավաստելու համար իրար կողքի բերենք միայն *հիշողության* բնութագրումները. «Հատկու-

¹⁸ <http://www.tert.am/am/news/2013/08/20/grigor-gurzadyan/843882>

¹⁹ **Գր. Գուրգադյան**, Կաթավաքերոյի առեղծվածը, էջ 17:

²⁰ **Գր. Գուրգադյան**, Տիեզերքը ավի մեջ, էջ 13:

թյուն՝ ակնհայտորեն ավելի զորեղ, քան տեսողությունն է, զգալն ու լսելը: Քան մտածելը: ...Միայն դա՝ հիշողության հատկությունը, բավական է, որ մարդ արարածը Երկիր կոչված այս հողագնդի վրա բնութագրվի որպես բացառիկ երևույթ...», «Հիշողությունը նաև անցյալը վերականգնելու հատկությունն է», «Մարդը կարող է նաև կառավարել իր հիշողությունը: Դա կոչվում է տրամադրություն», «Մարդու վարքագիծը, նրա գործողությունները ականայից սկսում են կառավարվել հիշողություններից, անցյալից եկող թելադրանքներով: Հիշողությունը սխրանքներ կարող է գործել»²¹:

Ինքնատիպ է նաև Գուրգաղյանի՝ *հոգու* մեկնաբանությունը: Մարդու ունեցած բոլոր մտազգայական հատկանիշներից էլ բարձր է դասում նրան տրված ամենաառեղծվածայինը՝ հոգին. ահա թե այն ինչպես է դիտարկում. «Մարդը, մարդ արարածը պիտի հոգի ունենա: Թող նա չուեննա ոչինչ, չուեննա կապ աշխարհի հետ, բայց ունենա հոգի, նա կուեննա ամեն ինչ, նա կտեսնի ու կլսի Տիեզերքը»²²:

Տիեզերքը տեսնող ու լսող, առասպելական իմացությամբ առանձնացող Գուրգաղյան գրողի ստեղծած գեղարվեստական գրականությունը անփոփոխ է՝/հ/, անսահմանի, «բարձրագույն իրականության» և հավերժի մեծ ու փոքր տիեզերատարածքների՝ սովորական մահկանացուներիս համար աննկատելիները զարմանալի անմիջականությամբ դարձնում է նկատելի՝ նրբորեն բացելով դրանց գաղտնագրերն ու փոխանցելով դրանց զլխավոր հղագրումը, այն է՝ մարդը, որ «Երկիր մոլորակի հետ տիեզերական իրադարձություն է, եզակի իրադարձություն», եթե գիտակցի տիեզերքն իր մեջ, և «այս հողագնդի վրա դեզերող ամեն մի մարդ արարածի ներսում այդ միտքը հասնի համոզմունքի մակարդակի, աշխարհը երևի թե կլինի այլ, քան հիմա է... »: Եթե այս հղագրումը բանաձևվի և մարդ բանականի հոգևոր արժեքները զլխավորող կողմնորոշիչների շարքում դասվի, դառնա նրա աշխարհընկալման, վարքագծի ու դավանանքի հիմնարար գծերից մեկը, թերևս դեռ ուշացած չլինի, և աշխարհը դառնա բոլորովին այլ, ու մարդը չբռնի ինքնակրթանման ուղին:

Իր ստեղծած գրականության էջերում մարդու մեջ մարդկայինի պանծացմամբ, օրվա մարդուն ու եկող սերնդին ուղղված կենսածն թելադրող հղագրումներով, իր քաղաքացիական ազնվագույն դիրքորոշումների շեշտումներով Գրիգոր Գուրգաղյան խոհագրողը անվերապահորեն նվաճում է ժամանակի և ընթերցողի հոգեբանական վստահությունը, օգնում ճշտորոշելու վարքաբանական տարազան դրսևորումներն ինչպես անձնային, այնպես էլ ազգային կյանքում:

Օգտագործված գրականություն

1. Թ. Թորանյան, Ուր կտանին ճամփաները, Եր., «Սովետական գրող», 1978:
2. Գր. Գուրգաղյան, Տիեզերքը ավի մեջ, Եր., «Զանգակ-97», 2005:
3. Գր. Գուրգաղյան, Կաքավաբերդի առեղծվածը, Եր., «Զանգակ-97», 1998:
4. Գր. Գուրգաղյան, Մի սիրո պատմություն, Եր., «Զանգակ-97», 2004:

²¹ Նույն տեղում, էջ 361:

²² Նույն տեղում, էջ 369:

ЗУХРА ЕРВАНДЯН

Доцент кафедры Языков АГЭУ,
кандидат филологических наук

Изображение “человека-события” в рассудительных работах Григора Гурзадяна.– Изображенные Григором Гурзадяном “люди-события”- это индивидуальности, выделяющиеся своеобразными обобщениями, меняющие представления мира, гиганты мысли, создающие мир по-новому.

Восславляя в человеке гуманное направленными сегодняшнему человеку и будущему поколению сопроводительными работами, которые диктуют форму бытия, а также ставя ударения на свои высоконравственные гражданские установки, мыслитель-писатель Григор Гурзадян безоговорочно покоряет психологическое доверие времени и читателя, завоёвывает правильно выбранные различные поведенческие проявления как в личной, так и в национальной жизни.

Ключевые слова: астрофизик, человек-событие, ориентир, чуткий, гиганты мысли.

JEL: Y8, Y9, Z00

ZOUKHRA YERVANDYAN

Associate Professor at the Chair of
Languages at ASUE, PhD in Philology

Depiction of “Man of Event” in the Works of Grigor Gurzadyan.– “Men of event” depicted by Grigor Gurzadyan are personalities distinguished by unique generalizations: they are changing conception of the world, they are intellectual giants that are creating the world in a new way.

Praising humane in a man, with his covering works intended for today’s man and the next generation, that are dictating forms of existence and putting emphasis to his noble civil guidelines, writer-philosopher Grigor Gurzadyan is unconditionally winning the psychological trust of time and reader, helping to choose correctly different behavioral manifestations both in personal and in national lives.

Key words: astrophysicist, man of event, guidelines, sensitive, intellectual giants.

JEL: Y8, Y9, Z00